Հորս

Բնակչության թիվը՝ 277

Վայոց ձոր մարզի Հորս գյուղը վերաբնակեցվել է 1918 թվականին Նախիջևանի Մեծոպ գյուղից ներգաղթված ընտանիքներով։

Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում կառուցված զարդաքանդակներով, սրբատաշ պատերով, 13 – րդ դարի կիսավեր «Չեսարի Դարպաս» կառույցը և հարակից՝ վարդագույն քարերով կերտած եկեղեցիական համալիրը։

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա։

Գյուղից վերև Գնդասար լեռն է՝ 2960 մ բարձրությամբ։ Գնդասար և հարակից լեռների աղբյուրները ջրով ապահովում են գյուղը։

Գյուղն ունի մշակույթի տուն , հիմնական դպրոց, բուժկետ։

Գյուղի բնակիչները զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։

Գյուղը սահնմանակից է Շատին, Սալլի և Թառաթումբ համայնքներին, հեռավորությունը մարզկենտրոնից 20 կմ է։

Կլիման՝ ձմռանը ցուրտ է, ամռանը՝ զով: